



Promise Health Plan

601 Potrero Grande Drive  
Monterey Park, CA 91755

**BLUE SHIELD PROMISE CAL MEDICCONNECT-ի ՈՒՂՂՈՒՄՆԵՐԻ ԹԵՐԹԻԿ 2022 Թ. ՄԱՍԱԿԱՐԱՐՆԵՐԻ և ԴԵՂԱՏՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ**

**Սա կարևոր տեղեկություն է Ձեր 2022 թ. Blue Shield Promise Cal MediConnect-ի ապահովագրության փոփոխությունների մասին:**

Մենք նախկինում Ձեզ տրամադրել ենք 2022 թ. Մատակարարների և դեղատների տեղեկագիրքը, որը տեղեկատվություն է տրամադրում Ձեր ապահովագրության մասին՝ որպես մեր ծրագրի անդամ: Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ 2022 թվականի Մատակարարների և դեղատների տեղեկագրի տեղեկատվությունը թարմացվել է: Բաժին B3՝ Երկարաժամկետ ծառայությունները և աջակցությունը (Long - Term Services and Supports, LTSS) փոխվել են:

Բաժին B3-ում Blue Shield Promise-ը ջնջել է 15-ից 16-րդ էջերի Տնային աջակցության ծառայությունների (In-Home Supportive Services, IHSS) և Տարեցների համար բազմանպատակային ծառայությունների ծրագրի (Multipurpose Senior Services Program, MSSP) հղումները: Ստորև Դուք կգտնեք թարմացված տեղեկատվություն, որը նկարագրում է ուղղումը:

**Փոփոխություններ 2022 թ. Մատակարարների և դեղատների տեղեկագրում**

Ձնջված բառերը ներկայացված են ստորև բերված աղյուսակում՝ ամբողջությամբ ջնջված գծով: Ձնջված տեքստն ունի հետևյալ տեսքը՝ ջնջված տեքստ:

Մատակարարների և դեղատների տեղեկագիրք	Բնօրինակ տեղեկատվություն	Ուղղված տեղեկատվություն	Ի՞նչ է սա նշանակում Ձեզ համար:
B3: Երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն, 15-ից 16 էջեր	Որպես Blue Shield Promise Cal MediConnect ծրագրի անդամ, Դուք կարող եք երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն (LTSS) ստանալ, ինչպիսիք են՝	Որպես Blue Shield Promise Cal MediConnect ծրագրի անդամ, Դուք կարող եք երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն (LTSS) ստանալ, ինչպիսիք են՝	Ձեր IHSS նպաստները չեն փոխվի, նպաստի տնօրինումը կատարվում է Կալիֆորնիայի սոցիալական ծառայությունների բաժնի կողմից

	<p>Համայնքի վրա հիմնված մեծահասակների ցերեկային ծառայությունները (Community-Based Adult Day Services, CBAS), որոնք տրամադրում են բուժօրվրական ծառայություններ, ֆիզիկական, աշխատանքային և խոսքային թերապիա, թերապևտիկ գործունեություն և սնունդ համայնքի կենտրոններում: <del>Տնային աջակցության ծառայություններ (In-Home Supportive Services, IHSS), տնային խնամքային մարդկանց համար, ովքեր չեն կարող ապահով մնալ իրենց տանը առանց խնամքի օգնության:</del></p>	<p>Համայնքի վրա հիմնված մեծահասակների ցերեկային ծառայությունները (Community-Based Adult Day Services, CBAS), որոնք տրամադրում են բուժօրվրական ծառայություններ, ֆիզիկական, աշխատանքային և խոսքային թերապիա, թերապևտիկ գործունեություն և սնունդ համայնքի կենտրոններում:</p>	
<p>B3. Երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն, 15-ից 16 Էջեր</p>	<p>Blue Shield Promise Cal MediConnect Plan-ի կողմից տրամադրվող այլ երկարաժամկետ ծառայությունները և աջակցությունը ներառում են Տարեցների համար բազմանպատակային ծառայությունների ծրագիրը (MSSP): <del>MSSP-ն Medicaid Waiver-ի գործերի կառավարման ծրագիր է 65- և ավելի բարձր տարիքի տարեցների համար, ովքեր իրավասու են Medi-Cal-ի համար և կարող են հաստատվել բուժօրվրական հաստատությունում տեղավորվելու համար, բայց ցանկանում են ապրել համայնքում: MSSP խնամքի տնօրենները աշխատում են շահառուի, նրանց ընտանիքի անդամների և բժշկական թիմի հետ՝ բացահայտելու և համակարգելու ծառայությունները տանը: Երկարատև խնամք/</del></p>	<p>Blue Shield Promise Cal MediConnect ծրագրի կողմից տրամադրվող այլ երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն ներառում են Երկարատև խնամք (Long-Term Care, LTC)/ խնամակալության խնամք, որը բժշկական, սոցիալական և անձնական խնամքի ծառայությունների մատուցումն է Medi-Cal-ի անդամներին, ովքեր չեն կարող ապահով ապրել տանը, բայց անհրաժեշտ չէ հիվանդանոցում մնալը: Մարդկանց տեղավորում են բուժօրվրական հաստատությունում (Nursing Facility, NF), որն առավել նպատակահարմար է՝ ելնելով բժշկական կարիքներից: Այս ծառայությունների մատակարարներին գտնելու համար տեսեք այս Տեղեկագրի 28-րդ</p>	<p>Ձեր MSSP-ի նպաստները չեն փոխվել: Դուք կշարունակեք ստանալ MSSP ծառայություններ Ձեր MSSP կայքից: Նպաստը տնօրինում է Կալիֆորնիայի ծերացման բաժինը:</p>

Ստացեք կարևոր տեղեկություններ ավելի արագ: Ստեղծեք կամ խմբագրեք Ձեր պրոֆիլը [blueshieldca.com/go](https://blueshieldca.com/go) կայքում

	<p>խնամակալությունը բժշկական, սոցիալական և անձնական խնամքի ծառայությունների մատուցում է Medi-Cal-ի անդամներին, ովքեր չեն կարող ապահով ապրել տանը, բայց կարիք չունեն հիվանդանոցում գտնվելու: Մարդկանց տեղավորում են խնամքի մակարդակի վրա, որն առավել հարմար է:</p>	<p>Էջը: Ձեր խնամքի համակարգողը կարող է Ձեզ ավելին պատմել, թե ինչպես մուտք գործել IHSS, MSSP և այլ հասանելի ծառայություններ, որոնք կօգնեն Ձեզ հարմարավետ ապրել Ձեր սեփական տանը կամ համայնքում այնքան անկախ, ինչքան թույլ են տալիս իրավասության պահանջները, և ինչպես դիմել այս ծրագրերին:</p>	
	<p>Նրանց բժշկական կարիքները և ներառում են հմուտ բուժքույրական հաստատություններ (Skilled Nursing Facilities, SNF), հաստատություններ, Ենթասուրհիվանդությունների համար հաստատություններ և Միջանկյալ խնամքի հաստատություններ: Այս ծառայությունների մատակարարներին գտնելու համար տեսեք այս տեղեկագրի 28-րդ էջը:</p>		

Ձեզանից որևէ գործողություն չի պահանջվում՝ ի պատասխան այս փաստաթղթի, **սակայն խորհուրդ ենք տալիս պահպանել այս տեղեկատվությունը հետագա օգտագործման համար:** Հարցեր ունենալու դեպքում խնդրում ենք զանգահարել մեզ (855) 905-3825 (TTY՝ 711), 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր:

Կարող եք այս փաստաթուղթն ստանալ անվճար ուրիշ ձևաչափերով, ինչպես՝ խոշոր տպատառերով, Բրայլի լեզվով կամ ձայնագրված: Չանգահարեք (855) 905-3825 (TTY 711), 8:00-ից 20:00, շաբաթը յոթ օր: Հեռախոսագանգն անվճար է:

Blue Shield Promise Cal MediConnect Plan-ը մի առողջապահական ծրագիր է, որը պայմանագիր է կնքել և՛ Medicare-ի, և՛ Medi-Cal-ի հետ, երկու ծրագրերի նպաստները մատուցելու անդամագրված անձանց: